Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ **ՀՀ Կոտայքի մարզի «Արզնիի Սերգեյ Սարխոշևի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (ռուսերենով ուսուցմամբ, 17 դասաժամ), երաժշտության (ցանկալի է առարկան ռուսերենով դասավանդելու իմացություն, 13 դասաժամ), կերպարվեստի (ցանկալի է առարկան ռուսերենով դասավանդելու իմացություն, 14 դասաժամ), ասորերեն լեզվի և գրականության (23 դասաժամ), ֆիզկուլտուրայի (ցանկալի է առարկան ռուսերենով դասավանդելու իմացություն 21 դասաժամ)** ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5)
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **փետրվարի 22-ից մինչև մարտի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:**

Մրցույթը տեղի կունենա **մարտի 9-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի Սերգեյ Սարխոշևի անվան միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0222) 9-46-53 կամ (094) 14-55-05 հեռախոսահամարներով: